

ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի շնորհավորական ուղերձը հեռուստատեսության համաշխարհային օրվա առթիվ

Հեռուստատեսության համաշխարհային օրվա առթիվ ջերմորեն շնորհավորում եմ մարզում գործող հեռուստատեսությունների բոլոր աշխատակիցներին:

Դժվար է գերազնահատել զանգվածային լրատվամիջոցների դերը հասարակական կարծիքի ձևավորման, առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ստեղծման ու պահպանման գործում: Ամենամեծ լսարան ունենալով՝ դուք կարողանում եք արագ արձագանքել տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձություններին, մատնացույց անելով պատասխանատուների աչքից վրիպած թերություններն ու բացթողումները, օգնում եք օր առաջ շտկել դրանք:

Ձեր համակողմանի և սկզբունքային լուսաբանումներով, անաչառ արձագանքով է պայմանավորված նաև շարքային քաղաքացու վերաբերմունքը հասարակական-քաղաքական անցուդարձին, տնտեսական ու սոցիալական ձեռնարկումներին, մշակութային իրադարձություններին:

Լիահույս եմ, որ կառուցողական գործակցությունը շարունակական է լինելու ու նպաստելու է մեր միասնական ցանկության իրականացմանը՝ Սյունիքի հզորացմանը:

Կրկին շնորհավորում եմ, ձեզ ստեղծագործական անսպառ եռանդ եմ մաղթում, բոլորիդ ընտանիքներին՝ բարեկեցություն:

ՀՀ Սյունիքի մարզպետ



Վ. Հակոբյան

21 նոյեմբեր 2013թ.